ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/96

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Էներգանորոգում» ԲԲԸ-ի ներկայացուցիչ Վ.Միքայելյանի (լիազորագիր տրված 06.05.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.04.2020թ. թիվ 26/26-1/6267-2020 գրությամբ «Էներգանորոգում» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 23.04.2020թ. թիվ Ե/40/637-20 գրության հիման վրա, 28.04.2020թ. թիվ 26/26-1/6267-2020 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Էներգանորոգում» ԲԲԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Էներգանորոգում» ԲԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Էներգանորոգում» ԲԲԸ-ն 07.05.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1-20» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով էլեկտրոնային գնումների armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ներկայացրել է մասնակցության հայտ:

Պատվիրատուն Ընկերության հայտը բացելուց հետո հանձնաժողովի նիստում որոշում է կայացրել մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հետևյալ անհամապատասխանությունները.

1.Ներկայացնել պատշաճ կարգով կազմված և հաստատված հավելված 1.1-ը,

2.Հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

Ընկերության կողմից նշված ժամկետում չեն շտկվել նշված թերությունները, և հանձնաժողովը 22 ապրիլի 2020թ.-ին՝ ժամը 15:00-ին վերսկսված նիստում որոշում է կայացրել Ընկերության փաստաթղթերի առկայությունը գնահատել «անբավարար» և հայտը մերժել է:

ՀՀ կառավարությունը սույն թվականի մարտի 16-ից, ժամը 18:30-ից սկսած մինչև սույն թվականի մայսի 14-ը, ժամը 17:00-ն, ներառյալ՝ ամբողջ ՀՀ տարածքում հայտարարել է արտակարգ դրություն, որը պայմանավորված է ՀՀ-ում և ամբողջ աշխարհում նոր կորոնավիրուսային հիվանդության տարածման դեպքերով և այդ վարակը Առողջապահության համաշխարհային կազմակերպության ղեկավարի՝ 2020 թվականի մարտի 13-ի հայտարարությամբ որպես պանդեմիա որակելու հանգամանքով:

ՀՀ պարետի 24.03.2020թ. թիվ 16 որոշման համաձայն՝ ՀՀ-ի ողջ տարածքում սահմանափակվել է անձանց տեղեշարժը:

ՀՀ պարետի 27.03.2020թ թիվ 19 որոշման համաձայն՝ արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված՝ տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ կիրառվել են ժամանակավոր սահմանափակումներ, որոնց մեջ են մտնում նաև Ընկերության գործունեությունը:

Ընկերության գործունեությունը վերսկսվել է միայն ՀՀ պարետի՝ 22.04.2020թ. թիվ 51

որոշման համաձայն, երբ արդեն լրացել էր հանձնաժողովի կողմից Ընկերությանը տրված մեկ աշխատանքային օրվա ընթացքում թերությունների շտկման ժամկետը:

Նշված իրավիճակում Ընկերության գործունեության սահմանափակման պատճառով վերջինիս համար ստեղծվել է պարտավորության կատարման անհնարինություն, որի համար կողմերից ոչ մեկը պատասխանատու չէ, և առկա է կողմերի մեղքի բացակայությունը:

Ընկերությունը նշել է, որ տվյալ դեպքում առաջացել է անհաղթահարելի ուժի (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ) այնպիսի իրավիճակ, որի պայմաններում վերջինս չէր կարող նշված ժամկետում այդ թերությունը շտկել, քանի որ իր գործունեությունը պարետի որոշմամբ սահմանափակված էր, և Ընկերության աշխատակիցները գտնվում էին ինքնամեկուսացման վիճակում և չէին ներկայանում աշխատանքի:

Ընկերությունը նշել է, որ ստեղծված իրավիճակի մասին հայտով հայտնել է Պատվիրատուին՝ ներկայացնելով գրություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ կառավարության 16.03.2020թ. թիվ 298-Ն որոշման հետևանքով՝ բանկային համակարգը աշխատում է գերծանրաբեռնված, ուստի բանկային երաշխիքը կարող ենք տրամադրել 30.04.2020թ.»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը հայտնել է, որ բացակայում են «Էներգանորոգում» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/96 ընթացակարգի շրջանակներում 11.05.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.04.2020թ. թիվ Ε/40/637-20 գրությամբ հայտնել է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի պահուստային թողարկման ДКВР 20/13 տեսակի 3 հատ

շոգեկաթսաների ապատեղակայման և 2 հատ նոր շոգեկաթսաների տեղակայման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1-20» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «Էներգանորոգում» ԲԲԸ-ն:

Հայտերի բացման նիստում պարզվել է, որ ընթացակարգի մասնակիցը՝ «Էներգանորոգում» ԲԲԸ-ն, հրավերով սահմանված փաստաթղթերից էլեկտրոնային գնումների armeps.am համակարգ չի ներբեռնել հայտի ապահովումը, իսկ Հավելված 1.1-ը (իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները) ներբեռնել է՝ առանց լրացնելու: Հայտի ապահովման փոխարեն ներկայացրել է գրություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ կառավարության 16.03.2020թ. թիվ 298-Ն որոշման հետևանքով՝ բանկային համակարգը աշխատում է գերծանրաբեռնված, ուստի բանկային երաշխիքը կարող ենք տրամադրել 30.04.2020թ.»:

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մեկ օրով կասեցրել է հայտերի բացման և գնահատման նիստը՝ մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Սակայն, սահմանված ժամկետում «Էներգանորոգում» ԲԲԸ-ն ոչ մի շտկում չի ներկայացրել, որի պատճառով գնահատող հանձնաժողովը «Էներգանորոգում» ԲԲԸ-ի հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը գնահատել է «անբավարար» և ընթացակարգը հայտարարել է «չկայացած»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 11.05.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/96 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/96 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար պահուստային թողարկման ДКВР 20/13 տեսակի 3 հատ շոգեկաթսաների ապատեղակայման և 2 հատ նոր շոգեկաթսաների տեղակայման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1-20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***10.03.2020թ.***:

2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1-20» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակվել է ***08.04.2020թ.***:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.04.2020թ. թիվ 26/26-1/6267-2020 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 23.04.2020թ. թիվ Ե/40/637-20 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև «Էներգանորոգում» ԲԲԸ-ի 07.05.2020թ. գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը** նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները**, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն **հրապարակում է տեղեկագրում**, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) **գնման գործընթացի կազմակերպում** (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ**

փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ <u>նաև հրապարակված,</u> գնումների պլանի առկայությունն է:**

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով <u>գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում</u> գրավոր սահմանվում են՝**

1) **պատասխանատու ստորաբաժանում,** և

2) **գնումները համակարգող**

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա **<u>գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում</u> պատասխանատու ստորաբաժանումը՝**

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը:...

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Նույն կետի 9-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ընդ որում՝ հայտի ապահովման չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար պահուստային թողարկման ДКВР 20/13 տեսակի 3 հատ շոգեկաթսաների ապատեղակայման և 2 հատ նոր շոգեկաթսաների տեղակայման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1-20» ծածկագրով գնանշման

հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***10.03.2020թ.***:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էներգանորոգում» ԲԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.04.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Էներգանորոգում» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ էլեկտրոնային գնումների armeps.am համակարգ ներբեռնված Հավելված 1.1-ը լրացված և կնքված (ստորագրված) չէ, ինչպես նաև համակարգ չի ներբեռնվել հայտի ապահովումը:

Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը, որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ և «Էներգանորոգում» ԲԲԸ -ին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված հետևյալ անհամապատասխանությունները՝

1. Ներկայացնել պատշաճ կարգով կազմված և հաստատված Հավելված 1.1-ը,
2. Հայտի ապահովում՝ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

Նույն արձանագրությամբ 22.04.2020թ.-ին գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ Ընկերության կողմից չեն շտկվել ներկայացված հայտում տեղ գտած թերությունները, ուստի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել մերժել Ընկերության հայտը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ՍՑ-ՆԳ-2020/96 ընթացակարգի քննության շրջանակներում դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով տրամադրել Ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող ապրանքների մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակված լինելը հավաստող համապատասխան հղումը և/կամ կայքից արտատպված փաստաթուղթը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված և տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը և արձանագրել, որ այն հրապարակվել է ***08.04.2020թ.***՝ ավելի ուշ, քան Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը, ընդ որում՝ վերոհիշյալ նորմերից բխում է, որ պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման և գնումները համակարգողի համապատասխան իրավասություններն առաջանում են գնումների պլանի հրապարակման հաջորդող օրվանից:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1-20» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, որի արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընթացակարգը կազմակերպվել է վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ՝ հետևաբար գտնում եմ, որ իրավական հիմքի բացակայության պայմաններում կազմակերպված ոչ իրավաչափ ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս ընկերության, ուստիև հնարավոր չէ արձանագրել «Էներգանորոգում» ԲԲԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, ուստի գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.04.2020թ. թիվ 26/26-1/6267-2020 գրությամբ «Էներգանորոգում» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**